

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Եվրասիական տնտեսական միության կարգավորումների տրանսպորտի բնագավառի ընթացակարգերի նկարագրության վերաբերյալ

Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության բաղկացուցիչ մասերից է համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության իրականացումը, որն ուղղված է երկրների տնտեսական ինտեգրացմանը, տրանսպորտային միասնական տարածքի շարունակական և փուլային ձևավորմանը: Տրանսպորտային միասնական տարածքի հիմնական սկզբունքներն են մրցակցությունը, անվտանգությունը, հուսալիությունը, մատչելիությունը, թափանցիկությունը և էկոլոգիական խնդիրները:

Համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության խնդիրներն են.

- տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորումը,
- տրանսպորտի բնագավառում համաձայնեցված քայլերի իրականացումը և միջազգային լավագույն փորձի ներդրումը,
- անդամ-պետությունների տրանսպորտային համակարգերի ինտեգրումը միջազգային տրանսպորտային համակարգին,
- անդամ-պետությունների տրանսպորտային տարանցիկ ներուժի առավել արդյունավետ օգտագործումը,
- տրանսպորտային ծառայությունների որակի բարձրացումը,
- տրանսպորտի անվտանգության ապահովումը,
- մարդկանց կյանքին և առողջությանը և շրջակա միջավայրի վրա տրանսպորտի բացասական ազդեցության նվազեցումը,
- ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը:

Համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության հիմնական սկզբունքներն են.

- ընդհանուր տրանսպորտային համակարգի ձևավորումը,
- եվրասիական տրանսպորտային հանգույցների ձևավորումը և զարգացումը,
- միության շրջանակներում տրանսպորտի պոտենցիալի զարգացումը և իրականացումը,
- տրանսպորտի ենթակառուցվածքների կորդինացված զարգացումը,
- տրանսպորտային փոխադրումների արդյունավետ իրականացման նպատակով լոգիստիկ կենտրոնների ստեղծումը,
- անդամ-պետությունների կադրային պոտենցիալի ներգրավումը և օգտագործումը,
- տրանսպորտի բնագավառում գիտության զարգացման և տեղեկատվական նորամուծությունների ներդրումը:

Ընդհանուր քաղաքականությունը տարվել է անդամ-պետությունների կողմից համատեղ, առաջնահերթ որոշումները կայացնելու են բարձրագույն խորհրդի կողմից:

Անդամ-պետությունների համաձայնեցված տրանսպորտային քաղաքականության մոնիտորինգն իրականացվում է եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Տրանսպորտի բնագավառում գոյություն ունեն 2 հիմնական համաձայնագրեր, որոնք եվրասիական տնտեսական միությանը միանալու հիմնական պայմանագրի մաս են կազմում: Դրանք են՝

- «Մաքսային միության արտաքին սահմանին տրանսպորտային (ավտոմոբիլային) հսկողություն իրականացնելու մասին» համաձայնագիրը,

- «Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիությունը՝ ներառյալ սակագնային քաղաքականության հիմունքները կարգավորելու մասին» համաձայնագիրը:

Պայմանագրի թիվ 24 հավելվածով նախատեսված է արձանագրություն, որի <<Ավտոմոբիլային տրանսպորտ>> մասով սահմանված է, որ

միջպետական ավտոմոբիլային բեռնափոխադրումները պետք է իրականացվեն առանց թույլտվությունների՝

1. Երկու անդամ երկրների միջև և այլ անդամ երկրների միջև,
2. Տարանցումը անդամ պետությունների միջև
3. Դեպի 3 երկիր և 3-րդ երկրից միայն անդամ պետությունների տարածքում:

Փաստացի Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև երկկողմ, տարանցիկ և անդամ պետությունների միջև դեպի երրորդ երկիր և երրորդ երկրից բեռնափոխադրումների իրականացման թույլտվություններ չեն պահանջվում: Հայկական փոխադրողների համար թույլտվություններ պահանջվում են միայն ոչ անդամ պետություններից դեպի Ռուսաստանի Դաշնություն և հակառակ ուղղությամբ բեռնափոխադրողների համար (օրինակ. Վրաստանից դեպի ՌԴ և հակառակ ուղղությամբ բեռնափոխադրումների իրականացման համար հայկական փոխադրողները պետք է ունենան թույլտվություններ):

Նույն սկզբունքը գործում է նաև Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև իրականացվող բեռնափոխադրումների դեպքում:

Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև բեռնափոխադրումների որևէ թույլտվություն չի պահանջվում:

Միաժամանակ ներկայումս ընթանում են բանակցություններ 2015 թ. հուլիսի 1-ից անդամ պետությունների միջև միջպետական բեռնափոխադրումների բնագավառում <<կաբոտաժային>> փոխադրումները ազատականացնելու նպատակով: 2016-2025թթ. համար նախատեսվում է իրականացնել փուլային ազատականացում: Այսինքն, անդամ պետությունում հաշվառված բեռնատար տրանսպորտային միջոցը կարող է մեկ այլ անդամ պետության տարածքում իրականացնել ներքին փոխադրում, որոնց քանակը 1 տարվա ընթացքում դեռևս քննարկման փուլում է: Նման <<կաբոտաժային>>

փոխադրումը նախատեսվում է իրականացնել այն պայմանով, որ փոխադրումը իրականացվի անդամ պետության տարածքում մինչև բեռնման կետ հասնելը: Սակայն դեռևս հստակեցված չէ դրանց իրականացման չափաքանակները և վերահսկողությունը:

Պայմանագրի հիմնական սկզբունքն է, որ բոլոր անդամ պետությունները ձգտեն արգելքների վերացմանը:

Համաձայնագրի հիմնական նպատակն է մաքսային տեսչական մարմինների կողմից Մաքսային Միության ներքին սահմանի մեկ կետում բոլորի կողմից համաձայնեցված տվյալների ուսումնասիրության իրականացումը, որը առցանց կփոխանցվի մյուս անդամ պետություններին: Արդյունքում այլ անդամ պետության տարածքում փոխադրողը կազատվի կրկնակի ուսումնասիրությունից:

Միաժամանակ միջպետական բեռնափոխադրումները շարունակվելու են կարգավորվել միջպետական երկկողմ համաձայնագրերի հիման վրա: